ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 01

## ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 40 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելովԿոտայքի մարզպետի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 490-Ա որոշման պահանջները՝ ***որոշում եմ.***

1. Ջրառատ համայնքի ղեկավարի 2017թվականի նոյեմբերի 28-ի «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով ստեղծելու և Ջրառատ համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 08-ի N 48 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 40 որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «Վարդան Քալանթարյան, Գեղամ Հայրապետյան» բառերը փոխարինել «Հարություն Ալեքսանյան, Արմեն Վարդանյան» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ.
գ.Ջրառատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 02

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշման, Ջրառատ հանայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 38-Ն որոշման, հիմք ընդունելով Գրիգոր Գրիգորյանի կողմից ներկայրած հայտը և վճարման անդորրագրերը՝ ***որոշում եմ.***

1. Գրիգոր Գրիգորյան անհատ ձեռնարկատիրոջը /հարկ վճարողի հաշվառման համար՝ 66935771/ տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն Ջրառատ համայնքի 4-րդ փողոց 6 հասցեում գտնվող 20 քմ մակերես տարածքով օբյեկտում՝ 2021թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ի համար:

2. Սույն որոծումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 ___թ.
գ.Ջրառատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 03

## ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի պահանջները՝ ***որոշում եմ.***

1. 2021թվականի ընթացքում Ջրառատ համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտի՝ պաշտոնական հրապարակման օր նշանակել համայնքի տարածքում այդ նպատակով նախատեսված ցուցատախտակներին փակցնելու օրվան հաջորդ օրվանից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 թ.
գ.Ջրառատ